ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» օգոստոսի 2026 թ. № 301

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ 06-006-0087-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «ՌՈՒՍՏԱՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Սասուն Նորիկի Ասատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով փոխանցված «ՀՀ, մարզ Լոռի, համայնք Սպիտակ, քաղաք Սպիտակ, Պանրագործների թաղամաս 188 անասնապահական համալիր» հասցեում գտնվող 06-006-0087-0003 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 18,8 հեկտար մակերեսով արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող շինությունների ճշգրտված հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 3
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» օգոստոսի 2026թ. № 902

ԳԱՐԵԳԻՆ ՌՈՒԲԵՆԻ ՄԱՑԱԿՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԵ ԳԱՐԵԳԻՆ ՄԱՑԱԿՅԱՆԻՆ ԵՎ ՌՈՒԲԵՆ ԳԱՐԵԳԻՆ ՄԱՑԱԿՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Գարեգին Ռուբենի Մացակյանին, Մարինե Գարեգնի Մացակյանին և Ռուբեն Գարեգնի Մացակյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրում գտնվող, 06-040-0131-0002 կադաստրային ծածկագրով 0,09761 հեկտար մակերեսով հողամասի վրա 2008 թվականին ինքնակամ կառուցված կիսանկուղի, աստիճանահարթակի, բնակելի տան, աստիճանահարթակի, ծածկի և պարիսպների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05022026-06-0100 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026RGZPTW, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ--ի կողմից տրամադրված եզրակացությունը և Գարեգին Ռուբենի Մացակյանի ներկայացուցիչ Մելինե Վաղարշակի Թորոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գարեգին Ռուբենի Մացակյանին (ծնված՝ 06.12.1962թ.), Մարինե Գարեգնի Մացակյանին (ծնված՝ 16.11.1981թ.) և Ռուբեն Գարեգնի Մացակյանին (ծնված՝ 04.01.1987թ.) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրում գտնվող, 06-040-0131-0002 կադաստրային ծածկագրով 0,09761 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի

կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 78,70 քառակուսի մետր մակերեսով կիսանկուղը, 3,40 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 108,70 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 23,20 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 8,70 քառակուսի մետր մակերեսով ծածկը, 4,9 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Գարեգին Ռուբենի Մացակյանին, Մարինե Գարեգնի Մացակյանի և Ռուբեն Գարեգնի Մացակյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը:

4.Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Գարեգին Ռուբենի Մացակյանին, Մարինե Գարեգնի Մացակյանին և Ռուբեն Գարեգնի Մացակյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 189 643,32 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար: Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 3

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» օգոստոսի 2026թ. № 903

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-021-0039-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,303 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2026 թվականի մարտի 12-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը (գրանցված են սեղանամատյանում թիվ 598, թիվ 599), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06032CGDV6AK) և Մովսես Հովհաննեսի Խաչիկյանի (ծնված՝ 17.08.1963թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրում գտնվող՝ 06-021-0039-0011 կադաստրային ծածկագրով 0,303 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 196,9 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Արևաշող, 8-րդ փողոց, 18 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1807):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 3
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» օգոստոսի 2026թ. № 904

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-061-0124-0027 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,22 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով թիվ ԼԴ/1290/02/25 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի մայիսի 18-ի վճիռը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06122X7ZTHSX) և Վիլիսոն Գրիշայի Սիմոնյանի (ծնված՝ 26.11.1963թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0124-0027 կադաստրային ծածկագրով 0,22 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գնվող 99,1 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 63,25 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Հարթագյուղ, 16-րդ փողոց, 2-րդ փակուղի, 1 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1816):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 3
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» օգոստոսի 2026թ. № 905

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0075-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,20647 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՑՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ մասով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0075-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,20647 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1991 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան, աստիճանահարթակի և անասնաշենքի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 20266KFM7D և Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06011LZL4X94)՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0075-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,20647 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման

գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 75,70 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 9,60 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը և 32,80 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական:

2. Հաստատել Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0075-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,20647 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող շինությունների հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Պանրագործների թաղամասի 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, 2 բնակելի տուն» հասցեն:

5. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

6. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Ստասիկ Սլավիկի Մաշակարյանին (ծնված՝ 26.10.1971թ.) օրինականացված կառույցը և դրա պահպանման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 3
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» օգոստոսի 2026թ. № 906

ՍՈՒՐԵՆ ԱԶԱՏԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով, որ Սուրեն Ազատի Նահապետյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0075-0002 կադաստրային ծածկագրով 0,11900 հեկտար մակերեսով հողամասի վրա 2007 թվականին ինքնակամ կառուցված նկուղի, աստիճանահարթակի, 2020 թվականին՝ բնակելի տան, աստիճանահարթակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27012023-06-0030 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026ZGAGXP, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ--ի կողմից տրամադրված եզրակացությունը և Սուրեն Ազատի Նահապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սուրեն Ազատի Նահապետյանին (ծնված՝ 13.06.1960թ.), սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0075-0002 կադաստրային ծածկագրով 0,11900 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա

ինքնակամ կառուցված 28,20 քառակուսի մետր մակերեսով նկուղը, 7,90 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 64,20 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 8,00 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սուրեն Ազատի Նահապետյանի սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Սուրեն Ազատի Նահապետյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 171 073,5 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար: Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 4

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» օգոստոսի 2026թ. № 907

ԱՎԱԳ ՌԱԶՄԻԿԻ ԳՅՈՒԼԲԱՆԳՅԱՆԻՆ, ՆԱՏԱՇԱ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒԼԲԱՆԳՅԱՆԻՆ, ՍՈՆԻԿ ԱՎԵՏԻՔԻ ԳՅՈՒԼԲԱՆԳՅԱՆԻՆ ԵՎ ՍՄԲԱՏ ՌԱԶՄԻԿԻ ԳՅՈՒԼԲԱՆԳՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Ավագ Ռազմիկի Գյուլբանգյանին, Նատաշա Անուշավանի Գյուլբանգյանին, Սոնիկ Ավետիքի Գյուլբանգյանին և Սմբատ Ռազմիկի Գյուլբանգյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրում գտնվող 06-028-0009-0008 կադաստրային ծածկագրով 0,279 հեկտար մակերեսով հողամասի վրա 2004 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան, աստիճանահարթակի, բաց պատշգամբի և անասնաշենքի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1001810 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2026CF8S9N, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06042VAXHLWM) և Ավագ Ռազմիկի Գյուլբանգյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Ավագ Ռազմիկի Գյուլբանգյանին (ծնված՝ 06.08.1964թ.), Նատաշա Անուշավանի Գյուլբանգյանին (ծնված՝ 14.10.1938թ.), Սոնիկ Ավետիքի Գյուլբանգյանին (ծնված՝ 05.10.1966թ.), Սմբատ Ռազմիկի Գյուլբանգյանին (ծնված՝ 28.08.1967թ.), ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրում գտնվող, 06-028-0009-0008 կադաստրային ծածկագրով 0,279 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 201,23 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 5,34 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 45,34 քառակուսի մետր մակերեսոով բաց պատշգամբը, 15,34 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Ավագ Ռազմիկի Գյուլբանգյանի, Նատաշա Անուշավանի Գյուլբանգյանի, Սոնիկ Ավետիքի Գյուլբանգյանի և Սմբատ Ռազմիկի Գյուլբանգյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Գեղասար, 4-րդ փողոց, 24 բնակելի տուն» հասցեն:

4. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6. Ավագ Ռազմիկի Գյուլբանգյանին, Նատաշա Անուշավանի Գյուլբանգյանին, Սոնիկ Ավետիքի Գյուլբանգյանին և Սմբատ Ռազմիկի Գյուլբանգյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 198 318,63 հաշվարկել ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար: Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 4
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» օգոստոսի 2026թ. № 908

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՄԵՋ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-098-0024-0001 ԵՎ 06-098-0024-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,19153 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՑՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետով և որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին մասով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-098-0024-0001 և 06-098-0024-0014 կադաստրային ծածկագրերով հողամասերից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,19153 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1990 թվականին թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան, նկուղի, 2010 թվականին ինքնակամ կառուցված անասնաշենքերի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-4 համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 20268SWQTD և Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06202ZWBEB3X)՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-098-0024-0001 և 06-098-0024-0014 կադաստրային ծածկագրերով հողամասերից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,19153 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրում գտնվող 06-098-0024-0001 և 06-098-0024-0014 կադաստրային ծածկագրերով հողամասերից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,19153 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 92,10 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 70,10 քառակուսի մետր մակերեսով նկուղը , 28,30 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը և 38,50 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական:

3. Հաստատել Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրում գտնվող 06-098-0024-0001 և 06-098-0024-0014 կադաստրային ծածկագրերով հողամասերից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0,19153 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող շինությունների հատակագիծը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

5. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Սարամեջ, 1-ին փողոց, 31 բնակելի տուն» հասցեն:

6. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

7. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Կարեն Հենրիկի Պողոսյանին (ծնված՝ 22.12.1970թ.) օրինականացված կառույցը և դրա պահպանման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 4

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» օգոստոսի 2026թ. № 909

ԱՐՍԵՆ ՀՐԱՆՏԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ և 58-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Արսեն Հրանտի Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0048-0004 կադաստրային ծածկագրով 0,18700 հեկտար մակերեսով հողամասի վրա 2005 թվականին ինքնակամ կառուցված անասնագոմի, մառանի, բաց պատշգամբի, 2016 թվականին՝ բնակելի տան, նկուղի, աստիճանահարթակի, անասնագոմի, բաց պատշգամբի, 2011 թվականին՝ ծածկի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2089678 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026KAJDM2, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011XVUGJGM) և Արսեն Հրանտի Նիկողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արսեն Հրանտի Նիկողոսյանին (ծնված՝ 18.08.1962թ.) սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0048-0004 կադաստրային ծածկագրով 0,18700 հեկտար մակերեսով

բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 20,40 քառակուսի մետր մակերեսով անասնագոմը, 6,60 քառակուսի մետր մակերեսով մառանը, 10,30 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը, 114,60 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 15,80 քառակուսի մետր մակերեսով նկուղը, 2,80 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 34,20 քառակուսի մետր մակերեսով անասնագոմը, 5,10 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը, 24,90 քառակուսի մետր մակերեսով ծածկը ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Արսեն Հրանտի Նիկողոսյանի սեփականության իրավունքը: +

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ քաղաք, Պանրագործների թաղամասի 1-ին փողոց, 36 բնակելի տուն» հասցեն:

5.Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6 Արսեն Հրանտի Նիկողոսյանին՝

1)համայնքի բյուջե վճարել 361 442,64 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար: Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7.Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 4

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» օգոստոսի 2026թ. № 910

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ԹԻՎ 886 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի 2026 թվականի հուլիսի 27-ի թիվ 886 որոշման մեջ Ռոբերտ Մկրտիչի Ղազարյանի հայրանունը գրվել է «Մկրտչի»՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 27-ի «Ռոբերտ Մկրտչի Ղազարյանին սկզբնական հաշվառման վերցնելու, նրա հետագա խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու մասին» թիվ 886 որոշման վերնագրում, որոշման 1-ին և 2-րդ կետերում գրված «Մկրտչի» բառը փոխարինել «Մկրտիչի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 5
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» օգոստոսի 2026թ. № 911

ԳԱՐԵԳԻՆ ՌՈՒԲԵՆԻ ՄԱՑԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը՝ Գարեգին Ռուբենի Մացակյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին՝ **որոշում եմ.**

1. Գարեգին Ռուբենի Մացակյանի կողմից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2026 թվականի օգոստոսի 7-ին, ժամը 11:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Գարեգին Ռուբենի Մացակյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 5
ք. Սպիտակ